«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՆՑՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N«ԳՀԱՊՁԲ-2018/7-1-2-ԵՊԲՀ»

ք.Երևան «27» ապրիլի 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նարգար» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա.Հասանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է՝ 1 361 028,00 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Նարգար» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝Կորյունի 2	Ք Իջևան,Երիտասարդական 1/5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	ՀԷԲ ԲԲԸ , Իջևան մ/ճ
h/h 11500166513800	Հ/Հ 163508008774
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 07614133
Տնօրեն՝ Ա.Ա.Մովսիսյան	Տնօրեն՝ Ա. Հասանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N1
2018 թ. կնքված
ծուծկագրով պայմանագրի

«ԳՀԱՊՁԲ-2018/7-1-2-ԵՊԲՀ» «27» 04

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	Ապրանքի չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման ՀՀ դրամ		
								Հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*** Նախատեսվում է ձեռք բերել փուլային 2018թ ընթացքում
44163200	Խողովակների միացման մասեր/ Անցում -1/2 դյույմ GA	GA ՉԺՀ	1/2 դյույմ,/բրոնզ կամ լատուն/ երկու ծայրը արտաքին պարուրակով, ճկուն խողովակների, ջրի փականների, միացման և այլ աշխատանքների համար /15Հ/ հաստ պատով	հատ	126.00	12,600.00	100	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
44163280	Խողովակային ապրանքներ/ Ճկուն խողովակ 60սմ Venus	Venus LTD GA ՉԺՀ	Մետաղական,երկարությունը՝ 60սմ 1 գլուխը 1/2 դյույմ, մյուս գլուխը՝ մուշտուկ, մուշտուկը հավասար քանակի մեծ և փոքր գլխիկներով տաք և սառը ջրերի համար	հատ	432.00	86,400.00	200	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
44163280	Խողովակային ապրանքներ/ Ճկուն խողովակ 45սմ Venus	Venus LTD GA ՉԺՀ	Մետաղական,երկարությունը՝ 45սմ 2 գլուխը 1/2 դյույմ	հատ	450.00	90,000.00	200	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
44163280	Խողովակային ապրանքներ/ Ճկուն խողովակ 60սմ Venus	Venus LTD GA ՉԺՀ	Մետաղական,երկարությունը՝ 60սմ 2 գլուխը 1/2 դյույմ	հատ	516.00	103,200.00	200	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
44163280	Խողովակային ապրանքներ/ Խցափակիչ GA	GA ՉԺՀ	Խցափակիչ /էգ/ բրոնզե կամ լատունե 1/2 դյույմ	հատ	144.00	14,400.00	100	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
44163280	Խողովակների պարագաներ/ Գոֆրե զուգարանակոնքի	Alpin LTD ՉԺՀ	Գոֆրե զուգարանակոնքի 25սմ, 4դյույմ	հատ	990.00	9,900.00	10	Պատվիրատուի կողմից նշված	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա

		25սմ Alpin							հասցեով		ընթացքում
23	44511200	Ձեռքի սղոցներ/ Փայտի սղոց /սկավառակ/ Մատրիքս	Մատրիքս ՉԺՀ	Կարծր համաձուլվածքային ատամներով, սկավառակի անցքի տրամագիծը 32մմ,ընդհանուր տրամագիծը 260մմ, ատամների քանակը 48-60 հատ, սկավառակի հաստությունը 3մմ, նախատեսված փայտ կտրելու համար	հատ	3,000.00	15,000.00	5	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
24	44511200	Ձեռքի սղոցներ/ Լամինատի սղոց /սկավառակ/ Sova union	Sova union ՉԺՀ	Կարծր համաձուլվածքային ատամներով, սկավառակի անցքի տրամագիծը 32մմ,ընդհանուր տրամագիծը 260մմ, ատամների քանակը 48-60 հատ, սկավառակի հաստությունը 3մմ, նախատեսված լամինատ կտրելու համար	հատ	3,000.00	15,000.00	5	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31	44112170	Լինոլեում Շակինսկի	Շակինսկի ՍՊԸ ՌԴ	ՊՎՔ լինոլեում լայնությունը՝ 2մ, հաստությունը՝ 3մմ, տակի հատվածը՝ կտորով, արտաքին տեսքը ըստ պատվիրատուի պահանջի	մ2	1,380.00	138,000.00	100	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
33	31681100	Էլեկտրական պարագաներ/ Պերֆերատոր ING CO	ING CO LTD ՉԺՀ	220/240V,50/60 Hz,6,0A-1050W,12-40մմ, N137-275/min, քանդող և ծակող	հատ	42,900.00	42,900.00	1	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
37	33731200	Պաշտպանիչ հատուկ ակնոցներ Welding Goggles	Welding Goggles ՉԺՀ	Բալգալկայով, դռելով աշխատելիս անվտանգությունն ապահովելու համար	հատ	192.00	384.00	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
41	18141100	Աշխատանքային ձեռնոցներ / Ձեռնոց, բանվորական Բերդ	Բերդի կարի ֆաբրիկա ՀՀ	Ձեռնոց բանվորական պատրաստված լատեքսով մշակված 100 % բամբակե կտորից, մանժետը ռեզինե գրոծվածքից, նախատեսված է մետաղի և ապակու հետ անվտանք աշխատելու համար, չափերը L,XL, հինգ մատանի	զույգ	138.00	158,700.00	1150	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	1150	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
42	44163170	Խողովակ ռետինե <Վեմ>	<Վեմ> ՍՊԸ ՀՀ	Խողովակ սիլիկոնե 1/2 դյույմ կանաչապատ տարածքները ոռոգելու համար	մետր	168.00	50,400.00	300	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	300	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
43	44511110	Բահ սրածայր	Բահ սրածայր	Այգեգործական նապատակներով	հատ		8,964.00	6	Պատվիրատուի կողմից	6	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից

				օգտագործվող երկար պոչով սրածայր բահ		1,494.00					
44511220	Տարատեսակ ձեռքի գործիքներ/ Հարթաշուրթ Gripp	Gripp ֆիրմայի ՌԴ	Հարթաշուրթ N6 / 150, բռնակները մեկուսիչով, մետաղալար կտրելու տեղով	հատ	690.00	5,520.00	8	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	8	20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31681650	Էլեկտրական ապահովիչ/ Էլ.Ավտոմատ 25A Andeli	Andeli ֆիրմայի ՉԺՀ	25A, 3 ֆազ. մետաղական շինայի վրա նստող / ամրացվող՝ 1 ֆազանոց էլ. ավտոմատի պես ամրացվող	հատ	2,000.00	20,000.00	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31681650	Էլեկտրական ապահովիչ/ Էլ.Ավտոմատ 32A Andeli	Andeli ֆիրմայի ՉԺՀ	32A, 3 ֆազ. մետաղական շինայի վրա նստող / ամրացվող՝ 1 ֆազանոց էլ. ավտոմատի պես ամրացվող	հատ	2,100.00	21,000.00	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31681650	Էլեկտրական ապահովիչ/ Էլ.Ավտոմատ 50A Andeli	Andeli ֆիրմայի ՉԺՀ	50A, 3 ֆազ. մետաղական շինայի վրա նստող / ամրացվող՝ 1 ֆազանոց էլ. ավտոմատի պես ամրացվող	հատ	2,500.00	25,000.00	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31211520	Պաշտպանիչ տուփեր/ Ավտոմատի տուփ 8 տեղ Meksbox	Meksbox ֆիրմայի ՉԺՀ	Արտաքին պատին ամրացվող, տուփը թափանցիկ կափարիչով, բացվող, փակվող, /կոմպլեկտ/	հատ	2,130.00	21,300.00	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31211180	Ավտոմատ անջատիչներ/ Էլ. անջատիչ ներսի, 1 տեղ Sonrui	Sonrui ՉԺՀ	Էլ. անջատիչ ներսի, 1 տեղ	հատ	462.00	83,160.00	180	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	180	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31211180	Ավտոմատ անջատիչներ/Էլ. անջատիչ ներսի, 2 տեղ Sonrui	Sonrui ՉԺՀ	Էլ. անջատիչ ներսի, 2 տեղ	հատ	522.00	36,540.00	70	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	70	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31211180	Ավտոմատ անջատիչներ/Էլ. անջատիչ դրսի, 1 տեղ Sonrui	Sonrui ՉԺՀ	Էլ. անջատիչ դրսի, 1 տեղ	հատ	336.00	3,360.00	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31211180	Ավտոմատ անջատիչներ/Էլ. անջատիչ դրսի, 2 տեղ Sonrui	Sonrui ՉԺՀ	Էլ. անջատիչ դրսի, 2 տեղ	հատ	390.00	3,900.00	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31684400	Վարդակ 1 տեղ, դրսի Sonrui	Sonrui ՉԺՀ	Վարդակ արտաքին մոնտաժի համար, 1տեղ	հատ	324.00	162,000.00	500	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31684400	Վարդակ 2 տեղ, դրսի Sonrui	Sonrui ՉԺՀ	Վարդակ արտաքին մոնտաժի համար, 2տեղ	հատ	390.00	39,000.00	100	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

71	31331270	Էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ - 2x1,5 <Էլ Առ>	<Էլ Առ> ֆիրմայի ՀՀ	Կտրվածք/տրամագիծ - 2x1.5, պղնձե-բազմալար	մետր	138.00	55,200.00	400	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	400	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
74	31321110	Ցածր և միջին լարման մալուխներ/ Էլ. մալուխ- 2x2,5 <Էլ Առ>	<Էլ Առ> ֆիրմայի ՀՀ	Կտրվածք/տրամագիծ - 2x2,5,պղնձե-բազմալար,կրկնակի մեկուսիչ շերտով, կտրվածքը կլոր	մետր	276.00	55,200.00	200	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
75	31321110	Ցածր և միջին լարման մալուխներ/ Էլ. մալուխ- 2x4 <Էլ Առ>	<Էլ Առ> ֆիրմայի ՀՀ	Կտրվածք/տրամագիծ - 2x4,պղնձե-բազմալար,կրկնակի մեկուսիչ շերտով, կտրվածքը կլոր	մետր	420.00	84,000.00	200	Պատվիրատուի կողմից նշված հասցեով	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
Ընդամենը								1 361 028,00			

Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:

33, 35, 38, 83 չափաբաժիններով նախատեսված ապրանքները հանդիսանում են հիմնական միջոց և պետք է ունենան 365 օր երաշխիքային ժամկետ.

Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից, իր միջոցներով, Պատվիրատուի նշված հասցեով:

Ապրանքի առաջին փուլի մատակարարման ժամկետ է սահմանվում 20 օրացուցային օրը, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների
կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:
Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ Երևան, իրավաբանական հասցե՝Կորյունի 2
«Արիանեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ղեկավար՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նարգար» ՍՊԸ
Ք Իջևան,Երիտասարդական 1/5
ՀԷԲ ԲԲԸ , Իջևան մ/ճ
Հ/Հ 163508008774
ՀՎՀՀ 07614133

Տնօրեն՝ Ա. Հասանյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N2
«27» 04 2018թ. կնքված

«ԳՀԱՊՁԲ-2018/7-1-2-ԵՊԲՀ» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	44163200	Խողովակների միացման մասեր/ Անցում -1/2 դյույմ	... %	... %	... %	2,520.00	3,780.00	5,040.00	6,300.00	7,560.00	8,820.00	10,080.00	11,340.00	12,600.00	12,600.00
8	44163280	Խողովակային ապրանքներ/ Ճկուն խողովակ 60սմ	... %	... %	... %	17,280.00	25,920.00	34,560.00	43,200.00	51,840.00	60,480.00	69,120.00	77,760.00	86,400.00	86,400.00
9	44163280	Խողովակային ապրանքներ/ Ճկուն խողովակ 45սմ	... %	... %	... %	18,000.00	27,000.00	36,000.00	45,000.00	54,000.00	63,000.00	72,000.00	81,000.00	90,000.00	90,000.00
10	44163280	Խողովակային ապրանքներ/ Ճկուն խողովակ 60սմ	... %	... %	... %	20,640.00	30,960.00	41,280.00	51,600.00	61,920.00	72,240.00	82,560.00	92,880.00	103,200.00	103,200.00
12	44163280	Խողովակային ապրանքներ/ Խցափակիչ	... %	... %	... %	2,880.00	4,320.00	5,760.00	7,200.00	8,640.00	10,080.00	11,520.00	12,960.00	14,400.00	14,400.00
21	44163280	Խողովակների պարագաներ/ Գոֆրե զուգարանակոնքի 25սմ	... %	... %	... %	1,980.00	2,970.00	3,960.00	4,950.00	5,940.00	6,930.00	7,920.00	8,910.00	9,900.00	9,900.00
23	44511200	Ձեռքի սղոցներ/ Փայտի սղոց /սկավառակ/	... %	... %	... %	3,000.00	4,500.00	6,000.00	7,500.00	9,000.00	10,500.00	12,000.00	13,500.00	15,000.00	15,000.00
24	44511200	Ձեռքի սղոցներ/ Լամինատի սղոց /սկավառակ/	... %	... %	... %	3,000.00	4,500.00	6,000.00	7,500.00	9,000.00	10,500.00	12,000.00	13,500.00	15,000.00	15,000.00
31	44112170	Լինոլեում	... %	... %	... %	27,600.00	41,400.00	55,200.00	69,000.00	82,800.00	96,600.00	110,400.00	124,200.00	138,000.00	138,000.00
33	31681100	Էլեկտրական պարագաներ/ Պերֆերատոր	... %	... %	... %	8,580.00	12,870.00	17,160.00	21,450.00	25,740.00	30,030.00	34,320.00	38,610.00	42,900.00	42,900.00

37	33731200	Պաշտպանիչ հատուկ ակնոցներ	... %	... %	... %	76.80	115.20	153.60	192.00	230.40	268.80	307.20	345.60	384.00	384.00
41	18141100	Աշխատանքային ձեռնոցներ / Ձեռնոց, բանվորական	... %	... %	... %	31,740.00	47,610.00	63,480.00	79,350.00	95,220.00	111,090.00	126,960.00	142,830.00	158,700.00	158,700.00
42	44163170	Խողովակ ռետինե	... %	... %	... %	10,080.00	15,120.00	20,160.00	25,200.00	30,240.00	35,280.00	40,320.00	45,360.00	50,400.00	50,400.00
43	44511110	Բահ սրածայր	... %	... %	... %	1,792.80	2,689.20	3,585.60	4,482.00	5,378.40	6,274.80	7,171.20	8,067.60	8,964.00	8,964.00
47	44511220	Տարատեսակ ձեռքի գործիքներ/ Հարթաշուրթ	... %	... %	... %	1,104.00	1,656.00	2,208.00	2,760.00	3,312.00	3,864.00	4,416.00	4,968.00	5,520.00	5,520.00
48	31681650	Էլեկտրական ապահովիչ/ Էլ.Ավտոմատ 25A	... %	... %	... %	4,000.00	6,000.00	8,000.00	10,000.00	12,000.00	14,000.00	16,000.00	18,000.00	20,000.00	20,000.00
49	31681650	Էլեկտրական ապահովիչ/ Էլ.Ավտոմատ 32A	... %	... %	... %	4,200.00	6,300.00	8,400.00	10,500.00	12,600.00	14,700.00	16,800.00	18,900.00	21,000.00	21,000.00
50	31681650	Էլեկտրական ապահովիչ/ Էլ.Ավտոմատ 50A	... %	... %	... %	5,000.00	7,500.00	10,000.00	12,500.00	15,000.00	17,500.00	20,000.00	22,500.00	25,000.00	25,000.00
55	31211520	Պաշտպանիչ տուփեր/ Ավտոմատի տուփ 8 տեղ	... %	... %	... %	4,260.00	6,390.00	8,520.00	10,650.00	12,780.00	14,910.00	17,040.00	19,170.00	21,300.00	21,300.00
58	31211180	Ավտոմատ անջատիչներ/ Էլ. անջատիչ ներսի, 1 տեղ	... %	... %	... %	16,632.00	24,948.00	33,264.00	41,580.00	49,896.00	58,212.00	66,528.00	74,844.00	83,160.00	83,160.00
59	31211180	Ավտոմատ անջատիչներ/Էլ. անջատիչ ներսի, 2 տեղ	... %	... %	... %	7,308.00	10,962.00	14,616.00	18,270.00	21,924.00	25,578.00	29,232.00	32,886.00	36,540.00	36,540.00
60	31211180	Ավտոմատ անջատիչներ/Էլ. անջատիչ դրսի, 1 տեղ	... %	... %	... %	672.00	1,008.00	1,344.00	1,680.00	2,016.00	2,352.00	2,688.00	3,024.00	3,360.00	3,360.00
61	31211180	Ավտոմատ անջատիչներ/Էլ. անջատիչ դրսի, 2 տեղ	... %	... %	... %	780.00	1,170.00	1,560.00	1,950.00	2,340.00	2,730.00	3,120.00	3,510.00	3,900.00	3,900.00
62	31684400	Վարդակ 1 տեղ, դրսի	... %	... %	... %	32,400.00	48,600.00	64,800.00	81,000.00	97,200.00	113,400.00	129,600.00	145,800.00	162,000.00	162,000.00
63	31684400	Վարդակ 2 տեղ, դրսի	... %	... %	... %	7,800.00	11,700.00	15,600.00	19,500.00	23,400.00	27,300.00	31,200.00	35,100.00	39,000.00	39,000.00

71	31331270	էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ -2x1,5	... %	... %	... %	11,040.00	16,560.00	22,080.00	27,600.00	33,120.00	38,640.00	44,160.00	49,680.00	55,200.00	55,200.00
74	31321110	Ցածր և միջին լարման մալուխներ/ Էլ. մալուխ- 2x2,5	... %	... %	... %	11,040.00	16,560.00	22,080.00	27,600.00	33,120.00	38,640.00	44,160.00	49,680.00	55,200.00	55,200.00
75	31321110	Ցածր և միջին լարման մալուխներ/ Էլ. մալուխ- 2x4	... %	... %	... %	16,800.00	25,200.00	33,600.00	42,000.00	50,400.00	58,800.00	67,200.00	75,600.00	84,000.00	84,000.00
Ընդամենը															1 361 028 ,00

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Մ.Ա.Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նարգար» ՍՊԸ
Ք Իջևան,Երիտասարդական 1/5
ՀԷԲ ԲԲԸ , Իջևան մ/ճ
Հ/Հ 163508008774
ՀՎՀՀ 07614133

Տնօրեն՝ Ա. Հասանյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն